ՀԱՒԱՏ(Ք)

Posted on June 9, 2021 by Keghart



Category: Opinions

Ռուբէն Յովակիմեան, *Սեն Ռաֆայել, 2 Հունիս 21*

«Ի՞նչ պահանջել մի հասարակութիւնից, երբ նրա անդամները աւելի ժամանակ են տալիս խանութներին քան գրադարանին»: Նաոմ Շոմսկի, ԱՄՆ

Հաւատ(ք)-ի գաղափարը ոմանք կապակցում են կրօնին կամ որեւէ գերբնական ուժերի, մինչդեռ այն աւելի լայն եւ խորն է, բովանդակալից եւ յաճախ գործածւում է Սէր, Յոյս եւ Վստահութիւն իմաստութիւնների հետ: Բացի անձնականից կայ նաեւ ընդհանուր հասարակաց հաւատ, եւ վերջինիս անգոյութիւնը կամ թուլացումը կարող է ստեղծել շատ բացասական, մինչեւ իսկ ողբերգական երեւոյթներ, ինչպէս անբարոյականութիւն՝ լայն իմաստով, մատնութիւն եւ անյարգալից վերաբերմունք միմեանց նկատմամբ, դաւաճանութիւն, ստախօսութիւն, բանականութեան վերացում եւ բազում այլ մարդկային արատներ, ընդհուպ մինչեւ հասարակութեան կործանում: Հեռու լինելով տիրացուական քարոզից՝ անհրաժեշտ եմ գտնում նշել, որ տասը պատուիրանները համախմբում եւ ամբողջացնում են մի ընդհանուր բարոյականութիւն, որ որեւէ հասարակութեան գոյութեան հիմնական պայմանն է եւ ընդունուած էր ինչպէս հնագոյն Եգիպտոսում, նաեւ Չինաստանում եւ ամէնուր, մինչդեռ ցաւօք պիտի ընդգծել, որ այդ սկզբունքները, եթէ չեն անհետացել մեր երկրում, ապա նուազ կիրառելի են, մանաւանդ անկախութիւնից յետոյ, ընտրական քարոզարշաւների ընթացքին, չնայած աւանդապահ ենք եղած դարեր շարունակ:

Ցաւօք աչառու է նման վիճակի մասամբ հաստատումը մանաւանդ մեր սիրեցեալ երկրի քաղաքական դաշտում, ուր բոլոր տեսակի հարուածները թոյլատրելի են, իսկ բարոյագիտութեան (éthique) շատ ցածր մակարդակի՝ իմա անգոյութեան եւ գերագնահատուած սեփական շահերի դրդումով, ոմանք պատրաստ են երբեմն իրար յօշոտել եւ այն յայտարարում են բացէիբաց: Բարեբախտաբար նման արատները յատուկ են մեր հայրենաբնակների արկածախնդիր-պատեհապաշտ այն մասին (երբեմն կիսագրագէտ եւ քաղաքական առումով բանից անտեղեակ՝ ամենայն ռամիկ բազմութիւն *sic*), որոնք պատրաստ են ամէն գնով ինչ որ պաշտօնի՝ իմա աթոռի տիրանալ, մինչդեռ անհասկանալի է, որ հայրենի մտաւորականների (1) առողջ մասը թմբիրի մէջ է, քանզի մօտակայ անցեալում մտաւորականութիւն չձեւաւորուեց եւ անկիւն քշելով՝ եղածը յօդս ցնդեցրին:

Բնական է, որ հարց տանք, թէ ի՛նչ է պատճառը նման կացութեան: Ըստ իս՝ ՀԱՒԱՏԻ, փոխադարձ ՍԻՐՈՅ եւ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ բացակայութիւնը, որի պատճառով ստեղծւում են բանականութիւնից եւ տրամաբանութիւնից զուրկ յարաբերութիւններ, երբ բոլորը բոլորին թշնամի են, իսկ այլախոհութիւնը՝ անհանդուրժելի յանցանք: Թշնամի եւ հակառակորդ բառերը դարձել են հոմանիշ: Այս դժուար օրերին իրար քաշքշելը տեղին

չի կարող համարուել, բայց ցաւօք միայն այդ ենք տեսնում մեր քաղաքական դաշտում: Շշմեցուցիչ էր այս առաւօտ՝ յունիս 2-ին, «Ասպարէզ»-ի մէջ տեսած հետեւեալ ծանուցումը՝ «*Դաշնակցութեան մեծ ընտանիքը՝ իր բոլոր կառոյցներով եւ հաստատութիւններով մերժեց Փարիզի մէջ Նիկոլ Փաշինեանի հետ որեւէ տեսակի կապ կամ հանդիպում եւ զայն դիմաւորեց բողոքի ցոյցերով*»: Նախագահ Մակրոնի գրկաբաց ընդունելութեան դիմաց՝ ի՛նչ քստմնութեան օրինակ, եւ հասկացան բոլորը, որ մեր ոխերիմ թշնամին այլեւս Ալիեւը չէ Էրդողանի հետ: No comment-ողբալի է:

Կարիք կա՞յ անդրադառնալ խայտառակ պարտութեանը յաջորդող՝ առաւել խայտառակ երեւոյթներին «Հայրենիքի փրկութեան շարժում» անուան տակ կազմակերպուած խրտուիլակ ցոյցերը, որ սկզբունքով քաղաքական անգրագիտութիւն էր տասնեօթ դերակատարով՝ երկրորդ նախագահի խմբավարութեամբ եւ նոյները դառնալով 26 խմբակ պիտի մասնակցեն մօտակայ ընտրութիւններին եւ յայտնի չէ, թէ ի՞նչ անակնկալներ են մեզ սպասում: Ինչպէ՞ս բացատրել այս մարդկանց, որ որեւէ կուսակցութեան անուն ընտրելը բաւարար չէ իշխանութեան դէմ աղմուկ աղաղակով ցոյցեր կազմակերպել եւ այն անուանել «հայրենիքի փրկութիւն»՝ վարչապետ դառնալու անուրջով, որից միակ օգտուողը եղաւ Ալիեւը՝ աւելի յղփացաւ եւ նոր սադրանքների է դիմում մեր սահմանամերձ տարածքներում իր «յաղթողի իրաւունքով», մինչդեռ մեր խամաճիկ փրկիչները վեց ամիս անընդհատ «դաւաճան» գոռալով յաւակնում են Շուշին եւ Հադրութը վերադարձնել իրենց ունեցած գաղտնի կապերի շնորհիւ, միայն Փաշինեանի հեռանալու դէպքում: Նման ցնդաբանութիւնները յանցանք չեն, միայն թէ հաւատացող եւ հետեւողներ կան, որոնք մաս են կազմում այն ամբոխին, որ մի քանի դոլարով ծախում են իրենց ընտրական իրաւունքները՝ ուր բարոյականութիւնն է չքանում եւ Հաւատի, Սիրոյ եւ Վստահութեան համար տեղ չի մնում:

Չեմ կարողանում հաշտուել այն պարզ մտքի հետ, որ մեր հասարակութիւնը կամ նրա մի մասը՝ այն աստիճանի բարոյական անկում է ունեցել, որ մոռացել են երեք տասնամեայ թալանը, հոկտեմբեր 27-ը, մարտի 1-ը, տեղին թէ անտեղի կալանքները եւ այլ բազում յանցանքների կողքին արտագաղթի քաջալերումը, որ երկիրը դէպի անդունդ տանելու միջոցներից մէկն է:

Յոյսով եմ, որ մեր հայրենաբնակներից իւրաքանչիւրը յունիս 20-ին, գտնուելով քուէատուփի առջեւ, կ՝ունենայ ճիշտ որոշում ունենալու իմացականութիւն եւ բանականութիւն նոր վարչապետ ընտրելու առիթով:

There are no comments yet.